



2020-2021 ուստարվա «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի  
Ուսանողական խորհուրդի կատարողական զեկույց

- 1. Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում:** Հաշվետու ուսումնական տարում հաշվի առնելով Հայաստանում համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրությունը Ուսանողական խորհուրդի կողմից «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում 2020 թվականի սեպտեմբերի 16-ին կամակերպվեց գիտելիքի և դպրության օրվան նվիրված տոնական միջոցառում: Ինչպես միշտ, առաջին կուրսեցիներին և քոլեջի մյուս կուրսերի ուսանողներին ողջունեցին Քոլեջի տնօրեն, տիկին՝ Ի.Վարդայանը, տնօրենի տղակալ՝ Ն.Եգորյանը և Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը: Միջոցառման ընթացքում ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը ներկայացրեց Քոլեջի ուսանողական խորհրդի գործունեությունը, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:
- 2. Ուսանողական խորհրդի նոր կազմի, հանձնաժողովների ձևավորում, նախագահների ընտրություն և հաստատում:** Համաձայն Ուսանողական խորհրդի կանոնակարգի ուսանողական խորհրդի նոր կազմի ընտրությունները պլանավորվում է կազմակերպել 2021-2022 ուստարվա ընթացքում: Ըստ խորհրդի որոշմամբ ձևավորվելու են երկու հանձնաժողովներ՝ Ուսումնական և Կառավարչական հարցերի: Հաշվետու ժամանակահատվածում հաշվի առնելով 44 օրյա պատերազմը Ուսանողական խորհուրդը հրավիրել և անցկացրել է թվով 3 նիստ, որի ընթացքում քննարկվել են Քոլեջի ուսումնական և կառավարչական տարբեր հարցեր, կայացվել համապատասխան որոշումներ:
- 3. Առաջին կուրսեցիներին ծանոթացնել Քոլեջին, Ուս զործառույթներին և կազմին:** Ուսանողական խորհրդի նախագահի գլխավորությամբ սեպտեմբերի 14-16 կազմակերպվել են ճանաչողական շրջայցներ Քոլեջի լսարաններով, հանդիպումներ Քոլեջի անձնակազմի և ավագ կուրսերի ուսանողների հետ: Ուսանողական խորհրդի նախագահի տեղակալը առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրել է

Ուսանողական խորհրդի գործառույթներին, հանձնաժողովներին և Քոլեջի կարգապահությանը:

4. **Հանդիպումներ ուսանողության հետ՝ ըստ մասնագիտական խմբերի:** Համաձայն պլանի կազմակերպվել են ընդհանուր 3 հանդիպում-քննարկումներ: Ցավոք, 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակով նախատեսված բոլոր միջոցառումները տեղափոխվել են 2021-2022 ուստարի:
5. **Կուրսերի ավագների հետ գործող հարցումների, կարգերի և ժամանակացույցի վերաբերյալ քննարկումներ:** Ուսանողական հարցումները, կարգերի և ժամանակացույցերի հետ աշխատանքները կազմակերպվել են մասնակի: Ամբողջությամբ այն պլանավորվում է կազմակերպել հաջորդ տարվա ընթացքում:
6. **Մասնակցություն կառավարման մարմինների նիստերին:** Համաձայն Քոլեջում գործող կառավարման մարմինների ներքին նորմատիվ փաստաթղթերի Ուսանողական խորհրդի անդամները ակտիվ մասնակցել են բոլոր նիստերին, մասնակցել որոշումների կայացմանը և այլն:

**(Հիմք՝ խորհուրդների կազմերի հաստատման հրամաններ):**

**10. ՄԿԾ-ի և առարկայական/մոդուլային ծրագրերի վերանայման գործընթացներ:**

Քոլեջի տնօրեն Ի.Վարդանյանի հրամանով ձևավորված աշխատանքային խմբում ներգրավված են եղել նաև ուսանողական խորհրդի անդամները: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ամբողջովին վերանայվել են գործող ՄԿԾ-ը, մշակվել են ամբողջովին նոր ձևաչափով և պահանջներով մոդուլային/առարկայական ծրագրերը, ՄԿԾ-ի վերջնարդյունքները:

**12. Արտալսարանային հանդիպումներ դասախոսների հետ:** 2020-2021 ուստարվա ընթացքում ուսանողական խորհուրդը դասախոսական կազմի հետ ունեցել է ընդհանուր 3 հանդիպում, որի ընթացքում քննարկվել են ուսման վարձավճարների հավաքագրման, քննաշրջանի նախապատրաստական և պրակտիկաների կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ հարցեր:

**13. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում:** 2020-2021 ուստարվա ընթացքում հիմնադիր Մ.Նանյանի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ Քոլեջում կազմակերպվեցին համեստ տոնական միջոցառումներ, որի ժամանակ եղավ հյուրասիրություն և բոլոր աշխատակիցները ստացան նվերներ:

**14. Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառում:** Քոլեջի տնօրենի աջակցությամբ Դասախոսների ուղեկցությամբ Ուսանողական խորհրդը ուսանողության հետ միասին կազմակերպեց այցելություն Ցեղասպանության հուշահամալիր:

**20. Աշխատանքներ փանել ուսանողական գիտական կառույց ստեղծելու ուղղությամբ:**

Այս ուղղությամբ արդեն իսկ մեկնարկել են նախապատրաստական աշխատանքները, որի համար պարբերաբար խորհրդատվություն է տրամադրում արտաքին փորձագետ Ա.Գ.Գյոզալյանը: Նրա նախաձեռնությամբ հաշվետու ուստարվա ընթացքում մշակվել են երկու փաստաթղթեր, որոնք պլանավորվում է հաստատել և գործարկել 2021-2022 ուստարվա ընթացքում:

***Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա. Խուդաթյան***